«ԸՆԴՈՒՆՎԱԾ Է»
ՀՀԿ 2-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ
ԿՈՂՄԻՑ՝ ԿԱՅԱՑԱԾ
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ 1995Թ.
ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝
Ա. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԳԻԱՅԻ
02.08.1996 Թ.
ԹԻՎ 25/2-2 ՈՐՈՇՄԱՄԲ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝
Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**Ք. ԵՐԵՎԱՆ**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայաստանի Հանրապետական կուսակցության աշխարհայացքն ու գործունեությունը ելնում են Ազգի և Հայրենիքի հավիտենականության գաղափարներից:

Հայաստանի Հանրապետական կուսակցությունն իր գործունեության գլխավոր նպատակն է համարում Հայրենի ողջ բնատարածքի՝ Հայկական լեռնաշխարհի վրա Հայոց ազգային անկախ պետականության հաստատումը, ինչը միայն կապահովի ողջ հայության, հետևաբար նաև յուրաքանչյուր հայ անհատի բնականոն զարգացումը: ՀՀԿ- ն համոզված է, որ դա հնարավոր է միայն ազգային արժեքների վերականգնմամբ ու նոր արժեքների ստեղծմամբ, որոնց երաշխիքը կարող է լինել Հայոց պետության հզորացումն ու նրա շուրջ համայն հայության համախմբումը:

ՀՀԿ-ն գաղափարական-քաղաքական ժառանգորդն է Ցեղակրոն Ուխտերի և Ազգային Միացյալ կուսակցության, որոնք հայության համար ճակատագրական օրերին, սփյուռքում և Հայրենիքում, եղան հայրենասիրության և անկախության գաղափարների ջահակիրները:

ՀՀԿ-ն հայրենիքի անկախության պաշտպանությունը համարում է յուրաքանչյուր հայի սրբազան պարտքը, և պատահական չէ, որ 1988-ի ազգային ազատամարտի սկզբում ձևավորված «Անկախության բանակ» ռազմաքաղաքական միավորումը հենց հանդիսացավ 1990թ. -ի ապրիլի 2-ին ՀՀԿ-ի ստեղծման համար:

ՀՀԿ-ն հենվում է այն բոլոր հայորդիների վրա, որոնց համար ազգային շահը բարձր է դասակարգային, կրոնական և այլ հատվածական շահերից:

Հայ իրականության մեջ գործող բոլոր հասարակական ու քաղաքական ուժերի հետ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը իր հարաբերությունները կառուցում է ազգային շահերի առաջնայնության և ընդհանրության սկզբունքով:

## 2. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Մարդկության մեջ, ինչպես բնության մեջ ընդհանրապես, թելադրաբար իշխում է գոյության կռվի հավերժական օրենքը: Մարդկությունը կազմում են մարդկային տեսակները՝ ցեղերը և ազգերը, որոնք, ենթակա բնական ընտրության սկզբունքին, միայն ուժով են նվաճում ապրելու իրավունքը՝ իրենց հոգու, մտքի և բազկի բովանդակ ուժով:

Հայ (Արի) ցեղը, որպես մարդկային ինքնատիպ տեսակ, անհատների բնական միություն է, որոնք միմյանց հետ կապված են Արյան, Ոգու, Հայրենիքի, դրանց հետ կապված լեզվի, պատմական անցյալի, հավատի, բարոյականի, մշակույթի, կենցաղի և այլ անհրաժեշտ ընդհանրական հատկանիշների զգացողությամբ և գիտակցումով: Այդ հատկանիշներից մեկի կամ մի քանիսի վերանալու կամ դրանք այլ ազգերի հատկանիշներով փոխարինելու դեպքում ցեղը եղծվում է: Հատկանիշների խզում կարող է առաջանալ ցեղի մի մասի մոտ. այս դեպքում նրա մասն է խաթարվում, որով ցեղը նվազում, թուլանում է:

Մենք նույնացնում ենք «Հայ ցեղ» և «Հայ ազգ» հասկացությունները, քանզի Հայ ազգն իր մեջ ամփոփում, ներառում է ոչ թե մի շարք ցեղերի, ինչպես դա հատուկ է ազգերի մեծ մասին, այլ մեկ ցեղի: Այսինքն, Հայ ազգը նույն ինքը Հայ ցեղն է՝ պատմական բնաշրջանում առած:

Հայ ցեղի (ազգի) հայրենիքը Հայկական բարձրավանդակն է, որի ամբողջական տարածքի վրա է միայն հնարավոր նրա լիարժեք գոյատևումը, և ,որից դուրս նա ենթակա է աստիճանական վերացման: Դա այն տարածքն է, որտեղ բնականորեն առաջացել է Հայ ազգը, որի վրա նա կերտել է իր պատմությունն ու մշակույթը, ուր ամփոփված են իր զավակների աճյունները և որի սիրո և ազատության համար են իրենց արյունը նվիրաբերել նրա սուրբ նահատակները:

Ամեն մի կենսունակ ազգ, ունենալով որոշակի գերնպատակ, նախանշում է դրան հասնելու ճանապարհները ու միջոցները: Հայ ազգի գերագույն նպատակը հարատևումն է Հայրենիքում, հարատևումը՝ իր կենսական ուժի, ստեղծագործ հանճարի և ազատ կամքի:

Ազգային գաղափարախոսությունը ազգի գերագույն նպատակին հասնելու, նրա իղձերն ու ցանկությունները իրականացնելու տեսական ուղին է, որ կառուցվում է ազգային շահերի,

առաքինությունների ու կարողությունների զուգակցումով և բխում ազգի ծնունդից ու էությունից: Հետևապես, Հայ ազգային գաղափարախոսությունը պիտի բխի հայ ազգի էությունից, նրա Արիական ծագումից և կոչված լինի կանխորոշելու Հայության գերագույն նպատակի իրականացման ուղիները:

ՀՀԿ-ն Հայ ազգային գաղափարախոսության իրական և կայուն հիմք է համարում Ցեղակրոնությունը և Տարոնականությունը, որոնք զուտ հայկական գաղափարաբանություններ են՝ խարսխված Հայի էության ու բարոյականության վրա:

Տարոնականությունը պատասխանում է «որտեղի՞ց ենք գալիս», Ցեղակրոնությունը՝ «ո՞ւր ենք գնում» հարցադրումներին:

Դրանք իրենց մեջ ամփոփում են մինչ այդ եղած Հայ ազգային միտքը, միաժամանակ քարացած ուսմունքներ չեն և ենթակա են մշտական զարգացման:

. . . .

Մենք աստծո կողմից արարվել ենք որպես Հայ ցեղ, և հետևապես, մեր ձգտումը՝ հավիտենականացնելու Հայ տեսակը աստվածայինի կենդանի զգացում է, որով ապահովվում է օրգանական կապը Հայ անհատի և Աստծո միջև: Այսինքն, Հայ անհատի կապը աստվածայինի, հավիտենականի հետ անցնում է Հայ ցեղի հարատևության՝ նրա մշտնջենական ճանապարհով:

Այս ելակետն ունենալով ՀՀԿ-ն, մեր պետության հեթանոսական և քրիստոնեական ժամանակաշրջաններին մոտենում է ազգայինի առաջնայնության սկզբունքով՝ գնահատելով և օրինակելի համարելով այն ամեն հայկականը, որը առկա է մեր պատմության ողջ ընթացքում: ՀՀԿ-ն ազգը վեր է դասում կրոնական դավանանքից՝ պահանջելով լինել նախ Հայ: ՀՀԿ-ն թշնամի է բոլոր այն կրոններին ու վարդապետություններին, որոնց գաղափարաբանությունը կամ գործունեությունը ուղղված են Հայ ազգի դեմ:

ՀՀԿ-ն կարծում է, որ Հայ առաքելական եկեղեցին, որպես ազգային, աշխարհասփյուռ կառույց, հայության նկարագրի բաղկացուցիչ մաս, իր դավանաբանությամբ, նվիրապետությամբ, Հայ լեզվի ու մշակույթի պահպանման իր անուրանալի դերով, կշարունակի ծառայել Ազգին, դրանով իսկ՝ Աստծուն:

## 3. ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայոց ազգային պետությունը հայության նպատակների իրականացման հիմնական և ամենաարդյունավետ միջոցն է, նրա բոլոր հատվածների հուսալի և կայուն կենսագործունեության գրավականը:

Ազգային պետության խնդիրներն են.

- ազգի կենսունակ և անվտանգ զարգացման ապահովում Հայաստանում
- Հայրենիքի բնական սահմանների վերականգնում
- սփյուռքահայության կարողությունների կենտրոնացում և կազմակերպում՝ ի նպաստ Հայոց պետության հզորացման և Սփյուռքի արժանապատիվ գոյատևման վերջնական նպատակ ունենալով սփյուռքահայության վերադարձը Հայրենիք:

Ազգային պետության օրենքները բխում են ազգային արժեքների համակարգից, որն առաջնային է արժեքների այլ համակարգերի նկատմամբ:

Ազգային պետությունը երաշխավորում է իր քաղաքացիների անվտանգությունը, արժանապատվությունն ու ազատությունները և ապահովում անհատի կարողությունների լիարժեք իրացում, սրանով պայմանավորելով նրա բարեկեցությունը: Պետությունը արդյունավետ միջոցառումներ է իրականացնում իր քաղաքացիներին աշխատանքով ապահովելու ուղղությամբ, երաշխավորում նրանց կենսապահովման պայմանների բավարարումը:

Ազգային պետության կայացումն անցնում է այլ պետություններից և կառույցներից քաղաքական, տնտեսական և հոգևոր անկախացման ճանապարհով:

Ազգային պետությունը ազգի նպատակներն իրականացնում է նրա էության և բարոյականի վրա խարսխված իր քաղաքական-տնտեսական կառույցներով, բանակով, կրթության և գիտության համակարգերով, ազգային մշակույթի հովանավորությամբ:

Ազգային պետության իշխանության կառույցները՝ կախված իրականացվող խնդիրների առաջնայնությունից, կարող են փոփոխվել պետության գոյության տարբեր փուլերում: Կառույցների այս կամ այն ձևի ընտրության չափանիշը պետք է լինի ազգային խնդիրների լուծման և արժեքների հաստատման արդյունավետությունը:

Տնտեսության բնագավառում պետությունն ապահովում է պետական և մասնավոր հաստատությունների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ պայմաններ և համակարգում Հայրենիքի ու սփյուռքի ֆինանսական և տնտեսական կարողությունները՝ ի շահ երկրի հզորացման:

Պետության գոյության անհրաժեշտ պայման է երկրի ու նրա կենսական նշանակության ուղիների պաշտպանությունն ապահովող ռազմական ուժը: Այն հիմնված է սեփական ռազմարդյունաբերական համալիրի, ազգային հոգեբանությամբ տոգորված բանակի վրա, որի յուրաքանչյուր զինվորական պետք է պատրաստ լինի պաշտպանելու Ազգի և Հայրենիքի արժանապատվությունը՝ գերագույն պատիվ համարելով, հարկ եղած դեպքում կյանքի նվիրաբերումը հանուն դրանց:

Կրթության համակարգը հայ անհատի մեջ սերմանելով ազգային արժեքները, իրականացնում է ցեղային բարոյականով օժտված սերնդի դաստիարակությունը: Կրթության համակարգը պետք է անհատին տա խոր և բազմակողմանի գիտելիքներ, միաժամանակ ապահովելով այն բանի գիտակցումը, որ դրանք նախ և առաջ պետք է ծառայեն Ազգի և Հայրենիքի հզորացմանը:

Գիտությունն ու մշակույթը պետք է ծառայեն ազգի հոգևոր և նյութական ժառանգության վերականգնմանը, պահպանմանն ու զարգացմանը, պետք է բացահայտեն հայի էությունն ու կենսակերպը, ձևավորեն աշխարհընկալման հայ ազգային արժեքների համակարգը:

Գիտությունն ու մշակույթը պետք է իրականացնեն ազգային ավանդույթների ու գիտատեխնիկական առաջընթացի զուգակցումը՝ Հայոց պետականության համար ապահովելով բարոյահոգեբանական, մտավոր և տեխնոլոգիական գերակշռություն այլ երկրների նկատմամբ:

Պետությունը Հայրենիքում և Սփյուռքում ապահովում է ազգային մշակույթի մրցունակությունն այլ մշակույթների հետ բարոյական, նյութական, վարչական միջոցների համալիր կիրառմամբ, զերծ պահում ազգը օտար մշակութային, բարոյական և գաղափարական ոտնձգություններից:

## 4. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՀԿ-ն տնտեսական քաղաքականության գլխավոր նպատակ համարում է ազգային տնտեսական համակարգի ստեղծումը, որի հիմնադրույթները բխում են ազգային գաղափարախոսությունից և ծառայում ազգի գերագույն նպատակի իրականացմանը:

Հայ ազգային տնտեսական համակարգը Հայաստանի և նրանից դուրս ազգային օջախների տնտեսական կառուցվածքների այնպիսի փոխկապակցված ամբողջություն է, որտեղ գործում են Հայ ազգի նկարագրին ու էությանը համապատասխան տնտեսական հարաբերություններ, որոնցում իշխողը Հայ ազգի շահն է: Հայ ազգային տնտեսական համակարգի հիմնական կառույցը Հայաստանի ազգային տնտեսությունն է, որը պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.

ՀՀԿ-ն ազգային տնտեսության մեջ ընդունում է սեփականության բազմաձևությունը: Սեփականության պետական և այլ ձևերի միջև հարաբերակցությունը որոշվում է՝ ելնելով Հայաստանում տիրող իրավիճակից:

Համազգային սեփականություն են հողն իր ընդերքով, օդային ավազանը, ջրային ռեսուրսները, հաղորդակցման ճանապարհները, ինչպես նաև ռազմաարդյունաբերական համալիրը և ռազմավարական նշանակություն ունեցող հիմնարար արտադրությունները:

Հայաստանը պետք է ունենա գիտության և տեխնիկայի նվաճումների վրա հիմնված, ներմուծվող հումքից նվազագույն կախվածությամբ, ավարտուն արտադրական շրջանով, առավելապես գիտական և աշխատատար արդյունաբերական համակարգ, որը չի բացառում տնտեսական համագործակցությունն այլ պետությունների հետ:

Պետությունը խրախուսում և հովանավորում է առկա աշխատուժի վրա հիմնված գիտատար,

աճխատատար, բնատիպան ու յուրահատուկ այն արտադրությունները, որոնց վերջնական արտադրանքը կհավակնի առաջնակարգ(ցանկալի է` մենաշնորհական) դիրքի համաշխարհային շուկայում: Խրախուսվում և հովանավորվում են ազգային ավանդական արտադրությունները:

Գյուղատնտեսության բնագավառում հողի և արտադրության միջոցների նկատմամբ սեփականության ձևերի միջև հարաբերակցությունը որոշվում է` ելնելով տեղանքի առանձնահատկություններից, գյուղատնտեսական գործունեության ձևից ու նշանակությունից: Գյուղատնտեսական արտադրության կազմակերպման խրախուսելի ձև է համարվում ագարակաշնորհությունը:

Պետությունը հովանավորում է գյուղատնտեսությանը սպասարկող տեխնիկա-տեխնոլոգիական համակարգի գործունեությունը, մթերքների արտադրությանը կից վերամշակող արտադրությունների ստեղծումը:

Պետությունն ապահովում է ազգային դրամանիշի լիարժեք կիրառությունը, կանոնավորում տարադրամի օգտագործումը երկրի ներսում:

Պետությունը հովանավորում է ազգային արտադրանքի իրացումը և կարգավորում ապրանքների ներմուծումը, արտահանումը և շարժը:

Հարկային քաղաքականությունը հենվում է տարբերակված ու ճկուն հարկերի կիրառման վրա, դրանց չափը որոշելով տարածքի, ճյուղի ու արտադրության նշանակությունից ելնելով:

Օտար երկրներից ու կազմակերպություններից վարկերի ստացումը թույլատրելի է այն դեպքում, երբ դրանք կծառայեն ազգային-պետական շահերին չհակասող տնտեսական ծրագրերի իրականացմանը:

Ներքին վարկային համակարգը վերահսկում ու կարգավորում է պետությունը` տոկոսադրույքը տարբերակելով ըստ տարածքի, ճյուղի և արտադրության նշանակության:

Պետությունը հստակեցնում է օտարերկրյա և համատեղ ձեռնարկությունների գործունեությունը` արգելելով ազգապառակիչ միտում ունեցող ներդրումները, ըստ ճյուղի ու արտադրության նշանակության սահմանում է օտարերկրյա ներդրումների ու փայաբաժնի թույլատրելի չափեր:

Արտաքին առևտուրը խարսխվում է ազատ առևտրական հարաբերությունների վրա, սակայն պետությունը միաժամանակ հովանավորում է ռազմավարական նշանակության հումքի ու արտադրանքի ներմուծումը, հսկում դրանց արտահանումը:

Պետությունը կարգավորում է աշխատուժի արտահոսքն ու ներհոսքը, այն ուղղորդում դեպի պետական առաջնակարգ նշանակության ճյուղերը, և ձեռնարկաշնորհության խթանմամբ կանխում է գործազրկությունը:

## ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆ

5. Հայաստանի Հանրապետական կուսակցության անդամ կարող են լինել 18 տարին բոլորած ազգությամբ հայ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր ընդունում են Ծրագիրն ու Կանոնադրությունը, չեն հանդիսանում մեկ այլ հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ:

6. Հայաստանի Հանրապետական կուսակցությանը կարելի է անդամագրվել հետևյալ կարգով.

ա) որպես կուսակցության անդամ.

- ՀՀԿ Նախագահի կամ ՀՀԿ խորհրդի երկու անդամների երաշխավորությամբ և ՀՀԿ խորհրդի որոշումով,
- ՀՀԿ տարածքային կազմակերպության խորհրդի երկու անդամների երաշխավորությամբ և ՀՀԿ տարածքային կազմակերպության խորհրդի որոշումով,
- թեկնածուական ժամկետը լրանալուց հետո թեկնածությունը հաստատած մարմնի որոշումով կամ այն տարածքային կազմակերպության խորհրդի որոշումով, որտեղ գործում է սվյալ անձը,
- ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի որոշումով,

բ) որպես կուսակցության անդամության թեկնածու, վեց ամսյա ժամկետով,

- ՀՀԿ Նախագահի կամ ՀՀԿ խորհրդի երկու անդամների երաշխավորությամբ և ՀՀԿ խորհրդի որոշումով,

- ՀՀԿ տարածքային կազմակերպության խորհրդի երկու անդամների երաշխավորությամբ և ՀՀԿ տարածքային կազմակերպության խորհրդի որոշումով,

- ՀՀԿ սկզբնական խմբի երկու անդամների երաշխավորությամբ և ՀՀԿ տարածքային կազմակերպության խորհրդի որոշումով,

- ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովի որոշումով,

գ) ՀՀԿ նոր անդամի կամ անդամության թեկնածուի ՀՀԿ անդամակցության մասին որոշումը կարող է կասեցնել ՀՀԿ կազմակերպչական հանձնաժողովը:

7. ՀՀԿ անդամը և անդամության թեկնածուն անդամակցում են կուսակցության որևէ սկզբնական խմբի՝

8. Կուսակցության մեջ ընդունվելու մասին որոշման օրից ՀՀԿ անդամը և անդամության թեկնածուն մուծում են անդամավճար:

9. Եթե ՀՀԿ անդամի անդամակցությունը կուսակցությանը անթույլատրելի է դառնում ՀՀ օրենքով, ապա այն կասեցվում է: Վերականգնումը կուսակցության շարքերում կատարվում է անձնական դիմումի համաձայն՝ կազմակերպչական հանձնաժողովի որոշումով:

10. ՀՀԿ անդամը (թեկնածուն)՝

ա) պարտավոր է կատարել ՀՀԿ ղեկավար մարմինների որոշումները,

բ) պարտավոր է մասնակցել իր սկզբնական խմբի ժողովներին և միջոցառումներին,

գ) իրավունք ունի արտահայտելու իր կարծիքը, պաշտպանել իր հայացքները, առաջարկություններ անել և մասնակցել հարցերի քննարկումներին,

դ) իրավունք ունի մասնակցելու ընտրություններին, առաջադրել իր կամ ուրիշի թեկնածությունը՝ ՀՀԿ-ի մարմիններում ընտրվելու համար:

## ՀՀԿ-ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

### ՍԿԶԲՆԱԿԱՆ ԽՈՒՄԲ

11.ՀՀԿ կառուցվածքային հենքը կազմում են սկզբնական խմբերը: Սկզբնական խումբը բաղկացած է կուսակցության հինգ և ավելի անդամներից ու թեկնածուներից: Սկզբնական խումբը ստեղծվում է վարչատարածքային կամ նպատակային սկզբունքով:

Սկզբնական խումբ կարող են կազմակերպել.

ա) կուսակցության կազմակերպչական հանձնաժողովը,

բ) կուսակցության տարածքային խորհուրդը:

12. Սկզբնական խումբը ամիսը առնվազն մեկ անգամ հրավիրում է խմբի ժողով: Խմբի ժողովը օրինական է, եթե ժողովին մասնակցում են խմբի անդամների 2/3-ը: Որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ, ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:

Խմբի ժողովը ընտրում է խմբապետ, որին հաստատում է ՀՀԿ տարածքային խորհուրդը:

Խմբապետը ներկայացնում է սկզբնական խումբը ՀՀԿ տարածքային խորհրդում:

Սկզբնական խումբը իր գործունեության համար հաշվետու է ՀՀԿ տարածքային խորհրդին:

Հաշվետվությունը ներկայացվում է կիսամյակը մեկ անգամ՝ խմբապետի կողմից: Համագումարից հետո, մեկ ամսվա ընթացքում, սկզբնական խումբը կատարում է խմբապետի նոր ընտրություն:

13. Սկզբնական խումբը իր դրամական եկամուտները (անդամավճարներ, նվիրատվություններ) փոխանցում է ՀՀԿ տարածքային խորհրդին: Անդամավճարները հավաքում է խմբապետը:

## ՀՀԿ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ

14. Վարչատարածքային միավորի (համայնքի, համայնքում տեղակայված քաղաքի թաղամասի (համայնքապետության շրջանը կենտրոնով, համայնքային ենթակայության քաղաքը, քաղաքի շրջանը և այլն) շրջաններում ստեղծվում է ՀՀԿ տարածքային խորհուրդ, եթե այնտեղ գործում են մեկ և ավելի սկզբնական խմբեր:

ՀՀԿ տարածքային խորհուրդը կազմվում է ՀՀԿ տարածքային խորհրդին ենթակա սկզբնական խմբերի խմբապետներից:

ՀՀԿ տարածքային խորհրդի նախագահն ընտրվում է ՀՀԿ տարածքային խորհրդի նիստում բաց քվեարկությամբ, ներկաների ձայների 2/3-ի մեծամասնությամբ մեկ տարի ժամանակով:

Անհրաժեշտության դեպքում նույն կանոնակարգով կարող է կատարվել տարածքային խորհրդի նախագահի վաղաժամկետ ընտրություն:

ՀՀԿ տարածքային խորհրդի նախագահը ներկայացուցչական ժողովում ՀՀԿ տարածքային խորհրդի ներկայացուցիչն է:

Այն սկզբնական խումբը, որի խմբապետն ընտրվում է տարածքային խորհրդի նախագահ, ընտրում է նոր խմբապետ:

Համագումարից հետո մեկ ամսվա ընթացքում, տեղի է ունենում տարածքային խորհրդի նիստ, որը կատարում է տարածքային խորհրդի նախագահի նոր ընտրություն:

15. ՀՀԿ տարածքային խորհուրդը իր նիստերում որոշումներ է ընդունում տվյալ տարածքում կուսակցության գործունեության վերաբերյալ: ՀՀԿ տարածքային խորհրդի նիստերը կայանում են ամիսը մեկ անգամ: Նիստը օրինական է, եթե մասնակցում են խորհրդի անդամների 2/3-ը:

Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց կամ փակ քվեարկությամբ:

ՀՀԿ տարածքային խորհուրդը իր գործունեության մասին հաշվետու է ներկայացուցչական ժողովին, հաշվետվությունը ներկայացվում է երեք ամիսը մեկ անգամ՝ ՀՀԿ տարածքային խորհրդի նախագահի կողմից:

ՀՀԿ տարածքային խորհուրդը իր դրամական եկամուտները փոխանցում է կուսակցության ղեկավար մարմիններին:

ՀՀԿ նախագահի որոշմամբ այն կարող է թողնվել տարածքային խորհրդի տնօրինությանը, որը ծախսերի մասին հաշվետվությունը յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնում է ՀՀԿ նախագահին:

## ՀՀԿ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

16. ՀՀԿ-ն ունի երիտասարդական կազմակերպություն, որը գործելով ՀՀԿ Կանոնագրի սահմաններում, ունի նաև առանձին կանոնակարգ:

## ՀՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Ներկայացուցչական ժողովի անհատական կազմը հետևյալն է՝ ՀՀԿ նախագահ, ՀՀԿ խորհրդի անդամներ, Ազգային Ժողովի ՀՀԿ անդամ պատգամավորներ, ՀՀԿ տարածքային խորհուրդների նախագահներ: Ներկայացուցչական ժողովի անդամները նիստերի ընթացքում օժտված են հավասար իրավունքներով:

18. ՀՀԿ-ի ներկայացուցչական ժողովը հրավիրվում է ամիսը մեկ անգամ, նիստը օրինական է, եթե մասնակցում է ներկայացուցչական ժողովի անդամների 2/3-ը:

Ներկայացուցչական ժողովի որոշումները ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ, նիստի մասնակիցների ձայների պարզ կամ 2/3 մեծամասնությամբ:

Համագումարից հետո, հերթական ներկայացուցչական ժողովում՝ առանց խորհրդի անդամների մասնակցության, ՀՀԿ նախագահի առաջարկությամբ հաստատվում է ՀՀԿ խորհրդի

նախագահի թեկնածությունը: Հաստատվում է ՀՀԿ խորհրդի նախագահի կողմից առաջադրված և ՀՀԿ նախագահի հետ համաձայնեցված ՀՀԿ խորհրդի անդամների թեկնածությունները:

ՀՀԿ խորհրդի նախագահի թեկնածուի կամ ՀՀԿ խորհրդի անդամի (անդամների) թեկնածուի (թեկնածուների) չհաստատվելու դեպքում, ըստ կանոնագրի, առաջադրվում են յուրաքանչյուր չընտրված տեղի համար 1-ից ավելի թեկնածուներ: Ընտրվում է այն թեկնածուն, որն ստացել է առավելագույն ձայների քանակը, բայց ոչ պակաս քան ներկաների ձայների 1/2-ը: Հավասար կամ ոչ բավարար քանակի ձայներ ստանալու դեպքում կատարվում է նոր քվեարկություն` երկու առավել ձայներ ստացած թեկնածուների համար:

Խորհուրդը չկազմավորվելու դեպքում հրավիրվում է ՀՀԿ արտահերթ համագումար:

19. ՀՀԿ ներկայացուցչական ժողովը.

ա) ամիսը մեկ անգամ քննարկում է ՀՀԿ տարածքային խորհուրդների գործունեությունը,

բ) հաստատում է ՀՀԿ նախագահի ներկայացրած ՀՀԿ ելևմուտքի մասին նախահաշվի նախագիծը` հաշվետու ժամանակաշրջանի համար, որը ներկայացվում է ՀՀԿ համագումարին,

գ) քննարկում է համագումարի համար ՀՀԿ նախագահի կազմած հաշվետու զեկուցման բովանդակությունը` համագումարից առնվազն մեկ ամիս առաջ,

դ) կարող է ընդունել որոշում` ՀՀԿ համագումարի քննարկմանը ներկայացնել ՀՀԿ լուծարման հարցը: Այդ որոշումը ներկայացուցչական ժողովը պետք է ընդունի անվանական քվեարկությամբ, անդամների ձայների 2/3-ի մեծամասնությամբ,

ե) ՀՀԿ նախագահի առաջարկով հաստատում է ՀՀԿ խորհրդի նախագահի և ՀՀԿ խորհրդի նախագահի առաջարկով խորհրդի անդամների թեկնածությունները:

## ՀՀԿ ԽՈՐՀՈՒՐԴ

20. ՀՀԿ խորհրդի նախագահի թեկնածությունը առաջադրում է ՀՀԿ նախագահը` հաստատում է ներկայացուցչական ժողովը:

ՀՀԿ խորհրդի նախագահը առաջադրում է հանձնաժողովների նախագահների թեկնածությունը, որոնց հաստատում է ՀՀԿ նախագահը:

Հանձնաժողովի անդամների թեկնածությունը, առաջարկում է հանձնաժողովի նախագահը, հաստատում` ՀՀԿ խորհրդի նախագահը:

ՀՀԿ խորհրդի նախագահը, համաձայնեցնելով ՀՀԿ նախագահի հետ, առաջադրում է խորհրդի թեկնածությունները, որոնց հաստատում է ՀՀԿ ներկայացուցչական ժողովը:

ՀՀԿ խորհրդի անդամների թիվը որոշում է ՀՀԿ նախագահը: Խորհուրդը համարվում է կազմավորված, եթե հաստատում է նրա անդամների 2/3-ը:

ՀՀԿ խորհրդի նախագահի թեկանածուի կամ ՀՀԿ խորհրդի անդամի (անդամների) թեկնածուի (թեկնածուների) չհաստատվելու դեպքում, ըստ կանոնագրի, առաջադրվում են յուրաքանչյուր չընտրված տեղի համար 1-ից ավելի թեկնածուներ: Ընտրվում է այն թեկնածուն, որն ստացել է առավելագույն ձայների քանակը, բայց ոչ պակաս քան ներկաների ձայների 1/2-ը: Հավասար կամ ոչ բավարար քանակի ձայներ ստանալու դեպքում կատարվում է նոր քվեարկություն` երկու առավել ձայներ ստացած թեկնածուների համար:

Խորհուրդը չկազմավորվելու դեպքում հրավիրվում է ՀՀԿ արտահերթ համագումար:

Խորհուրդը ՀՀԿ նախագահի որոշման կասեցման իրավունք ունի որոշման կասեցումից երեք օրվա ընթացքում: Եթե նախագահը պնդում է իր որոշումը, ապա հարցը տեղափոխվում է ներկայացուցչական ժողով, որի վճիռը վերջնական է:

21. ՀՀԿ խորհրդի նախագահը կազմակերպում է խորհրդի, հանձնաժողովների աշխատանքը:

22.Խորհրդի նիստերը հրավիրվում են շաբաթը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում հրավիրվում է արտահերթ նիստ: Խորհրդի նիստը օրինական է, եթե ներկա են խորհրդի անդամների առնվազն 2/3-ը:

23.Խորհրդի անդամը կարող է հրաժարական տալ: Հրաժարականը ընդունում է ՀՀԿ

ներկայացուցչական ժողովը: Խորհրդի անդամը կարող է ազատվել խորհրդի կազմից, ՀՀԿ խորհրդի նախագահի առաջարկությամբ, ներկայացուցչական ժողովի որոշմամբ:

24. ՀՀԿ խորհուրդը

ա) առաջարկություն է մտցնում ՀՀԿ հերթական կամ արտահերթ համագումար հրավիրելու մասին,

բ) ղեկավարում է ՀՀԿ համագումարի հրավիրման նախապատրաստական աշխատանքները, կազմում է հաշվետու զեկուցում կուսակցության նպատակների ռազմավարական և մարտավարական խնդիրների իրագործման գործընթացի և կուսակցության գործունեության այլ հարցերի մասին,

գ) վերահսկում է համագումարի և ներկայացուցչական ժողովի որոշումների կատարումը,

դ) մշակում է ՀՀԿ գաղափարախոսական հիմնադրույթները, ծրագրային և կանոնադրական փաստաթղթերը, ՀՀԿ մարտավարական սկզբունքները, ՀՀԿ անունից անում է հայտարարություններ և առաջարկություններ,

ե) համակարգում է Ազգային ժողովում, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմիններում ընտրված կուսակցականների աշխատանքը: Ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում ավելի հաճախ, նրանք խորհրդին ներկայացնում են հաշվետվություն իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ,

զ) կազմում է հանձնաժողովներ և հանձնախմբեր,

է) ներկայացուցչական ժողովում հանդես է գալիս գործունեության մասին հաշվետվությամբ,

ը) իրագործում է հսկողություն կուսակցության մամուլի, լրատվական և հրատարակչական ծառայությունների գործունեության նկատմամբ,

թ) մեկնաբանում է ՀՀԿ ծրագիրը, կանոնագիրը, համագումարի որոշումները,

ժ) կարող է առաջարկություններ կատարել ՀՀԿ կանոնագրի և ՀՀԿ ծրագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին, որոնք հաստատվում են ՀՀԿ համագումարի համաժողովի կողմից:

## ՀՀԿ ՀԱՄԱԺՈՂՈՎ

25. ՀՀԿ խորհուրդը կամ ներկայացուցչական ժողովը համագումարների միջև ընկած ժամանակահատվածում կարող է հրավիրել համաժողով, որի պատգամավորներն են ՀՀԿ նախագահը, ՀՀԿ խորհրդի նախագահները, Ազգային ժողովի ՀՀԿ անդամ պատգամավորները, ՀՀԿ տարածքային խորհուրդների անդամները, հանձնաժողովների նախագահները:

ՀՀԿ խորհուրդը համագումարների միջև ընկած ժամանակահատվածներում՝

ա) քննարկում և հաստատում է ՀՀԿ ծրագրի և կանոնագրի մեջ առաջարկվող ուղղումները,

բ) առաջադրում և հաստատում է ՀՀ Ազգային ժողովում և տեղական ինքնակառավարման մարմիններում կուսակցության կողմից առաջադրվող թեկնածուներին, հաստատում նրանց ծրագրերը,

գ) լսում է ՀՀԿ նախագահի և ՀՀԿ խորհրդի զեկուցումները կուսակցության ռազմավարական և մարտավարական գործունեության վերաբերյալ:

ՀՀԿ համաժողովը իրավազոր է պատգամավորների առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:

Որոշումները ընդունվում են համաժողովի ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ:

դ) կարող է ՀՀԿ խորհրդին ներկայացնել անվստահություն:

## ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀԸ

26. ՀՀԿ նախագահը կուսակցության համագումարների միջև ընկած ժամանակահատվածում կուսակցության բարձրագույն գործադիր մարմինն է:

27. ՀՀԿ նախագահը ՀՀԿ խորհրդի որոշման կասեցման իրավունք ունի որոշման կայացումից հետո՝ երեք օրվա ընթացքում: Եթե խորհուրդը պնդում է իր որոշումը, ապա հարցը տեղափոխվում է ներկայացուցչական ժողով, որի վճիռը վերջնական է:

28. ՀՀԿ նախագահն ընտրվում է ՀՀԿ համագումարում` երկու տարի ժամկետով` փակ քվեարկությամբ, գրանցված պատգամավորների ձայների 2/3 մեծամասնությամբ:

29. ՀՀԿ նախագահը ներկայացնում է ՀՀԿ շահերը և դիրքորոշումը պետական մարմիններում, հասարակական, քաղաքական և միջազգային կազմակերպություններում:

30. ՀՀԿ շահերը և դիրքորոշումները կարող է ներկայացնել ՀՀԿ նախագահի կողմից լիազորված անձը:

31. ՀՀԿ նախագահի հրաժարականը կարելի է պահանջել և ընդունել միայն արտահերթ համագումարի ժամանակ` փակ քվեարկությամբ, ձայների 2/3 մեծամասնությամբ: Արտահերթ համագումարի օրակարգ այդ հարցը մտցվում է ՀՀԿ նախագահի կամ ներկայացուցչական ժողովի որոշումով` փակ քվեարկությամբ, ձայների 2/3 մեծամասնությամբ:

32. ՀՀԿ նախագահը կարող է առաջարկություններ անել ՀՀԿ ծրագրի և ՀՀԿ կանոնակարգի մեջ փոփոխություններ կատարելու մասին, որոնք հաստատվում են ՀՀԿ համագումարում կամ համաժողովում:

33. Հաստատում է ներկայացուցչական ժողովի որոշումը կուսակցության պաշտոնաթերթի և այլ պարբերականների հրատարակման մասին:

ՀՀԿ խորհուրդը առաջադրում է ՀՀԿ պաշտոնաթերթի և ամսագրի խմբագիրներին, որոնց հաստատում է ՀՀԿ նախագահը:

ՀՀԿ նախագահը կարող է ստեղծել խորհրդակցական կարգավիճակով հանձնախումբ, իշխանությունների գործադիր մարմինների հետ աշխատանքը համակարգելու նպատակով:

Հանձնախմբի եզրակացությունները նախագահի միջոցով ներկայացվում է ՀՀԿ խորհրդին, ներկայացուցչական ժողովին:

ՀՀԿ նախագահը կարող է ունենալ խորհրդականներ:

ՀՀԿ նախագահը նշանակում է աշխատակազմի բաժինների ղեկավարներին:

## ՀՀԿ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

34. ՀՀԿ համագումարը կուսակցության բարձրագույն մարմինն է, որի ընդունած որոշումները անվերապահորեն պարտադիր են ՀՀԿ մարմինների, անդամների և թեկնածուների համար:

35. ՀՀԿ հերթական համագումարները հրավիրվում են երկու տարին մեկ անգամ: ՀՀԿ նախագահի կամ ներկայացուցչական ժողովի որոշմամբ կարելի է հրավիրել արտահերթ համագումար` իրենց առաջադրած օրակարգով:

Համագումարի հրավիրումից երկու ամիս առաջ ՀՀԿ խորհուրդը ներկայացուցչական ժողովի քննարկմանն է ներկայացնում համագումարի օրակարգի նախագիծը, որը հաստատվում է ոչ ուշ, քան համագումարից մեկ ամիս առաջ, և ուղարկվում տարածքային կազմակերպություններին:

36. ՀՀԿ համագումարի պատգամավորների ընդհանուր թիվը որոշում է ՀՀԿ-ի ներկայացուցչական ժողովը` ելնելով կուսակցության անդամների և թեկնածուների ընդհանուր թվից:

Պատգամավորներն առաջադրվում են սկզբնական խմբերի ժողովներում:

Համագումարի նիստը օրինական է, եթե ներկա են պատգամավորների ընդհանուր թվի 2/3-ը:

Համագումարի որոշումները ընդունվում են բաց կամ փակ քվեարկությամբ, ձայների կեսի կամ 2/3-ի մեծամասնությամբ:

Քվեարկության ձևը որոշվում է համագումարի ընթացիկ նիստում:

37. ՀՀԿ համագումարը.

ա) լսում և գնահատական է տալիս ՀՀԿ նախագահի հաշվետու զեկուցմանը,

բ) քննարկում և հաստատում է ՀՀԿ ծրագիրը և կանոնագիրը: Փոփոխություններ է կատարում դրանց մեջ:

գ) ընտրում է ՀՀԿ նախագահ,

դ) որոշում է ՀՀԿ ռազմավարական, գաղափարական-քաղաքական ուղին, որոշում է կուսակցության նպատակների իրագործման գործելակերպը,

ե) կարող է որոշում ընդունել ՀՀԿ լուծարի մասին: Լուծարի հարցը համագումարի օրակարգ կարող է մտցվել ներկայացուցչական ժողովի որոշմամբ: Լուծարի մասին որոշումը ընդունվում է պատգամավորների ձայների 2/3 մեծամասնությամբ, անվանական քվեարկությամբ:

## ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

38. ՀՀԿ անդամի (թեկնածուի) հակականոնադրական գործողություններ են համարվում.

ա) կուսակցության կանոնագրի դրույթների խախտումները,

բ) կողմից, ամբարտավան և վարկաբեկիչ վարմունքը կուսակցի նկատմամբ,

գ) կուսակցության իրավասու մարմինների և ժողովների որոշումներին չենթարկվելը ու նրանց իրագործումը խափանող գործողությունները,

դ) կուսակցության անդամի ինքնամեկուսացումը՝ կուսակցության նկատմամբ թերահավատ վերաբերմունքի, նրա գործունեությանը չմասնակցելու, իր վրա դրված պարտականությունները չկատարելու, բազմիցս անդամավճար չմուծելու միջոցով:

39. ՀՀԿ անդամի (թեկնածուի) կարգապահական պատիժները որոշվում և գործադրվում են համաձայն հետևյալ պատժաձևերի.

ա ) դիտողություն՝ գրավոր: Պատժաձևը սահմանվում է սկզբնական խմբի ժողովի, ՀՀԿ տարածքային խորհրդի, ՀՀԿ խորհրդի որոշմամբ,

բ) ՀՀԿ անդամակցության կասեցում: Պատժաձևը սահմանում են՝

1. Կուսակցության նախագահը (1-6 ամիս)
2. Կուսակցության խորհուրդը (1-6 ամիս)
3. ՀՀԿ տարածքային խորհուրդը (1-6 ամիս)

Կասեցման ժամկետը ավարտվելուց հետո, անդամակցությունը վերականգնվում է կասեցման որոշում ընդունած մարմնի որոշմամբ, եթե որոշում չի լինում, ապա անդամը դիմում է ՀՀԿ խորհրդին, որի որոշումը վերջնական է,

գ) վտարում կուսակցությունից: Պատժաձևի մասին որոշում է ընդունում ՀՀԿ խորհուրդը՝ իր, ՀՀԿ նախագահի կամ ՀՀԿ տարածքային խորհրդի առաջարկով և ներկայացմամբ:

40. ՀՀԿ ներկայացուցչական ժողովին անդամի նկատմամբ անվստահություն հայտնելու կամ պատժաձևի որոշման հարցը վճռվում է ներկայացուցչական ժողովի անդամների առնվազն 2/3 մեծամասնությամբ: ՀՀԿ ներկայացուցչական ժողովի այդ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

41. ՀՀԿ շարքերից վտարվածները մեկ տարի անց վերստին կարող են ընդունվել կուսակցության մեջ՝ որպես նոր անդամներ:

## ՀՀԿ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

42. ՀՀԿ կարող է ունենալ.

ա) պաշտոնական օրաթերթեր և շաբաթաթերթեր,

բ) քաղաքական-հասարակական և գրական-մշակութային ամսագրեր,

գ) լրատվական թերթիկներ:

43. ՀՀԿ թերթերը և ամսագրերը հիմնադրվում են ՀՀԿ ներկայացուցչական ժողովի որոշմամբ, որը հաստատվում է ՀՀԿ-ի նախագահի կողմից:

## ՀՀԿ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

44. ՀՀԿ դրամական միջոցները կազմվում են.

ա) անդամավճարներից,

բ) ոչ պետական աղբյուրներից ստացվող նվիրատվություններից,

գ) օրենքին չհակասող այլ աղբյուրներից:

Կուսակցականի անդամավճարը սահմանվում է ամսեկան ստացված եկամուտների 2%-ից ոչ պակաս:

45. ՀՀԿ-ին սեփականության իրավունքով կարող են պատկանել ծրագրային և կանոնադրական խնդիրների իրականացման համար անհրաժեշտ շինություններ, դրամական, փոխադրական միջոցներ, գույք:

## ՀՀԿ ԶԻՆԱՆՇԱՆԸ և ԴՐՈՇԸ

46. ՀՀԿ զինանշանը կուսակցության հիմնական խորհրդանշանն է: Այն առկա է կուսակցության բոլոր փաստաթղթերի և տարբերանշանների վրա: ՀՀԿ զինանշանը պարտադիր է ունենալ ՀՀԿ դրոշի, կնիքի, անվանաթերթիկի, լիազորագրերի, կրծքանշանների վրա: Թույլատրվում է պատրաստել հուշանվերներ՝ ՀՀԿ զինանշանի պատկերումով:

ՀՀԿ կնիքը զինանշանի պատկերումով իրավասու է օգտագործել միմիայն կուսակցության նախագահը կամ խորհրդի անդամը՝ նախագահի որոշմամբ:

47. Զինանշանը հայկական ավանդական հավերժանշանն է՝ ութ թերթիկներով, աջ պտույտով, կենտրոնում սուր և թևերը տարածած արծիվ:

ՀՀԿ դրոշը սպիտակ է, ոսկերիզ, որի մեջտեղում պատկերված է ՀՀԿ զինանշանը:

48. Պատերազմական իրադրության պայմաններում, երբ կազմալուծվել կամ վերացվել է պետությունը և վտանգված է Հայրենիքը, ՀՀԿ-ն գիտակցելով իր պատասխանատվությունը Ազգի և Հայրենիքի առջև, ՀՀԿ խորհրդի առաջարկությամբ և ներկայացուցչական ժողովի որոշումով անցնում է ռազմաքաղաքական կարգավիճակի, և ազգանվեր բոլոր ուժերի հետ միասին մասնակցում է Հայրենիքի ազատագրման և Ազգային պետականության վերականգնման պայքարին:

ՀՀԿ իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Թումանյան 23